



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«06» 08 2018թ.

No 06/3-1/45627-18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍԶՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Տ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 04.07.2018թ. թիվ Պ-40 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 8-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ շրջանառության հարկի համա-
կարգի շրջանակներում կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ) շահու-
թահարկին փոխարինող շրջանառության հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը և
նոտարները՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող շրջանառության հարկով, բացա-
ռությամբ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տե-
սակների.

- 254-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ օրենսգրքի 13-րդ բաժնի կի-
րառության իմաստով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն է
համարվում խոհարարական արտադրանքի օտարումը (այդ թվում՝ առաքմամբ) և
(կամ) սպառման կազմակերպումը: Այդ գործունեությունը ներառում է նաև խոհարարա-
կան արտադրանքի սպառման կազմակերպման հետ անմիջականորեն կապված ապ-
րանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մա-
տուցումը, մասնավորապես՝ սպասարկումը, մուտքի թույլտվությունը,

- 258-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ շրջանառության հարկը հաշվարկվում է 6 տոկոս դրույքաչափով (2019թ.-ի հունվարի 1-ից՝ 8 տոկոս դրույքաչափով, 2020թ.-ի հունվարի 1-ից՝ 10 տոկոս դրույքաչափով), իսկ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից ՀՀ-ում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտների մասով՝ 20 տոկոս դրույքաչափով՝ հաշվի առնելով նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները:

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումները՝ հայտնում ենք, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից (այդ թվում՝ հյուրանոցային ծառայությունների մատուցումից) ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 8/8/2018 11:10:15 GMT+4

Подписано: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատ.' ՎՄԸՍՎ հարկերի և պարտադիր վճարների
մեթոդաբանության թիվ 2 բաժին, հեռ.' 060-544-646